

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 450-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

----- 2019 թ. № ----- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 12-Ի N 450-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի
ապրիլի 12-ի «**Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ
ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության
զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները**» N 450-Ն
որոշման հավելվածի՝

1) Ամբողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության սպորտի բնագավառի
պետական լիազոր մարմին» բառերը՝ համապատասխան հոլովածներով,
փոխարինել «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարություն» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության սպորտի
բնագավառի պետական լիազոր մարմնի ղեկավար» բառերը՝
համապատասխան հոլովածներով, փոխարինել «Կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարար» բառերով.

2) 3-րդ կետում «մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը (իսկ 2018 թվականի համար՝
մինչև հունիսի 8-ը) կամ նոյեմբերի 1-ը» բառերը փոխարինել «տվյալ տարվա
ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը կամ հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը»
բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: